Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
մարտի 9-ի N 303 - Ա որոշման

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ
ՎՃԱՐՈՒՄԸ ԿԱՆԽԻԿ՝ ՄԱՄՆԱԲԱԺԻՆՆԵՐՈՎ

Ամսաթիվ

Միջազգային ֆինանսական կորպորացիայի
փոխնախագահ և կորպորատիվ քարտուղար
1818 H փողոց, NW
Վաշինգտոն, DC 20433
Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ՄՖԿ 2018 Ընդհանուր և ընտրողական կապիտալի ավելացում

Հարգելի տիկին,

Սույնով Հայաստանի Հանրապետությունը տեղեկացնում է Միջազգային ֆինանսական կորպորացիային (ՄՖԿ) հետևյալի մասին.

1. Հայաստանի Հանրապետությունը սույնով բաժանորդագրվում է ՄՖԿ 4,232 (1,625 ընտրողական կապիտալի ավելացում և 2,607 ընդհանուր կապիտալի ավելացում) բաժնեմասերին Կառավարիչների խորհրդի՝ «2018 թվականի ընտրողական կապիտալի ավելացման մասին» թիվ 271 և «2018 թվականի ընդհանուր կապիտալի ավելացման մասին» թիվ 272 որոշումների պայմաններով:

2. Վճարումը կատարվելու է ԱՄՆ դոլարով:

3. Հայաստանի Հանրապետությունը նման բաժնեմասերի համար վճարումը կատարելու է 2018 թվականի ընդհանուր կապիտալի ավելացման մասին և 2018 թվականի ընտրողական կապիտալի ավելացման մասին որոշումների պայմաններով և դրույթներով՝ համաձայն հետևյալ ժամանակացույցի՝

1) 1,625 ընտրողական կապիտալի ավելացման բաժնեմասերի առնչությամբ վճարումը կատարվելու է կանխիկ մինչև 2023 թվականի ապրիլի 15-ը.

2) 1,300 ընդհանուր կապիտալի ավելացման բաժնեմասերի առնչությամբ վճարումը կատարվելու է կանխիկ 2024 թվականի ապրիլի 15-ին.

3) 1,307 ընդհանուր կապիտալի ավելացման բաժնեմասերի առնչությամբ վճարումը կատարվելու է կանխիկ մինչև 2025 թվականի ապրիլի 15-ը:

4. Հայաստանի Հանրապետության անունից երաշխավորում եմ, որ Կառավարությունը ձեռնարկել է բոլոր միջոցները նշված բաժանորդագրությունը թույլատրելու համար, և ես պարտավորվում եմ ՄՖԿ-ին տրամադրել վերոնշյալ հարցերի վերաբերյալ այնպիսի տեղեկատվություն, որը ՄՖԿ-ն կարող է պահանջել:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության անունից

_____

Ստորագրություն

(ստորագրողի անունը և պաշտոնը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

09.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ